Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ

<<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց >>ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *Սովորողի մեջ արժեքային համակարգի ձեւավորումը տարբերակված ուսուցում մեթոդով*

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ *ՄԱՐՏՈՒՆԻ*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ՀԱՄՄԻԿ*

ՈՒՍՈՒՑԻՉ՝ *ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՆԺԵԼԱ*

ԴՊՐՈՑ՝ *«Մադինայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ*

Մարտունի-2022

Բովանդակություն

1.Ներածություն……
..3
2.Գրական ակնարկ…….
.5
3.Փորձարարական
հետազոտություն……
3.1.Խմբի
նկարագիրը……8
3.2.Փորձարարական
դասեր……
3.2.1.Փորձարարական դաս-
1……..8
3.3.2.Փորձարարական դաս-
2……9
4.Վերլուծություն……
……10
5.Գրականության
ցանկ……11
6.Հավելված……
1.Դասապլան-
1……12
2.Դասապլան-
2……14

1.Ներածություն

<<Արժեհամակարգ>> հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգեւոր, իմացական, մշակութային եւ էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձեւավորման եւ զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որեւէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին: Արժեհամակարգը լիակատար է եւ համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաեւ զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձեւավորման եւ նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարեւոր եւ անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձեւավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի եւ գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի եւ օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական եւ այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս եւ այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձեւավորումը սե- փական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի եւ թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսեւորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձեւերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ եւ այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց եւ այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները,

գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում,ձեւավորվումեն համառության, ինքնակազմակերպման եւ ինքնավերահսկման ընդունակություններ: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձեւավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է եւ մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

2.Գրական ակնարկ

Ներկա ժամանակներում դպրոցներում լայնորեն կիրառում են տարբերակված ուսուցման մեթոդը՝ որպես նորարարություն, որը հնարավորություն է տալիս բարելավել յուրաքանչյուր ուսումնառողի կրթական կարիքները՝ իր ունակությունների, շահերի եւ հնարավորությունների սահմաններում: Տարբերակված ուսուցում կիրառում են ոչ միայն այն դեպքում, երբ աշակերտներին առանձնացնում են ըստ ունակությունների, այլ նաև այն դեպքում, երբ նրանք չեն կարողանում լիովին յուրացնել ուսումնական ծրագրերը: Ուսումնառություն կազմակերպելիս պետք է հաշվի առնել ուսումնառության ոճերը: Օրինակ՝ մաթեմատիկական և արվեստի ուղղվածություն ունեցող դպրոցական աշակերտներին խնդրեցին վերարտադրել տարբեր Դա է պատճառը, որ նույն նյութն հաղորդելիս պետք է ընտրել տարբեր գործիքներ (Зарецкий В.К. Москва):

Տարբերակված ուսուցում մեթոդն իրականացնելու դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի եւ թեմայի ուսումնասիր- ման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրե- րում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսեւորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձեւերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ եւ այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց եւ այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձեւավորվում են համառության, ինքնակազմակերպման եւ ինքնավերահսկման ընդունա- կություններ: Տարբերակված ուսուցում կարելի է կազմակերպել երկու եղանակով՝ խմբային և անհատական: Խմբային տարբերակման ժամանակ սովորողները առաջադրանքները լուծում են երեք - չորս հոգով (խմբերով), իսկ երկրորդ դեպքում՝ աշխատում են անհատապես: Երկու դեպքում էլ սովորողին տրվում է հետադարձ կապ՝ մի դեպքում խմբի համար, իսկ մյուս դեպքում՝ ստուգվում է յուրաքանչյուր սովորողի աշխատանքը(*Климова Н.В 2009)*:

Տարբերակված ուսուցման մեթոդի նպատակները.

Տարբերակված ուսուցման ժամանակ յուրաքանչյուր դասարան կարելի է բաժանել 4 տիպաբանական՝ A, B, C և D խմբերի (*Климова Н.В 2009)*:

A խմբում սովորում են <<օժտված տաղանդավոր>> աշակերտները: B խմբում՝ լավ գիտելիքներ և առաջադիություն ունեցողները: Այս երկու խմբերի համար տարբերակված ուսուցումը ունի հետևյալ նպատակները.

•Գիտելիքների խորացում• Բարդ խնդիրներ լուծելու հմտության զարգացում•Անհատական հմտության զարգացում•Գիտական գրականությունից ինքնուրույն օգտվելու զարգացում C խմբում սովորում են բավարար գիտելիքներ ունեցողները, իսկ D խմբում՝ նվազագույն շեմը չհաղթահարողները: Վերջիններիս համար տարբերակված ուսուցման նպատակներն են (*Климова Н.В 2009)*.

Կրկնություն, նոր թեմայի յուրացում՝ հաջորդ աշխատանքը գրելու համար

Աշխատանքային հմտությունների զարգացում, ինքնուրույն աշխատելու հնարավորություն

•Խաղերի օգնությամբ հետաքրքրության առաջացում, տրամաբանական առաջադրանքների ինքնուրույն լուծում

•Վերարտադրել սովորած նյութը կամ լուծված խնդիրը

•Նվազագույն գիտելիքների յուրացման շեմը ներկայացնելու հմտություն

Տարբերակված ուսուցման մեթոդի դրական և բասացական կողմերը.

Տարբերակված ուսուցումը ունի իր դրական և բացասական ազդեցությունը սովորողների վրա (Зинудин А. А. 2004): Աշակերտների տարբերակումը ուժեղ, միջին և թույլ առաջադիությունների ունի ոչ միայն առավելություններ, այլ նաև թերություններ: Հագեցած դասերը, ծանր ուսումնական նյութերը խթանում են շնորհաշատ աշակերտներին, իսկ այն աշակերտները, որոնք ունեն դանդաղ զարգացման տեմպ. այս պարագայում սովորելու ցանկությունը կորցնում են, և ուսումնառությունը դառնում է ծանր պարտականություն: Ի. Ս. Յակիմանսկին կարծում է, որ ուսուցման սկզբնական շրջանում անհրաժեշտ է ստեղծել երեխայի զարգացման համար այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն կդրսևորի իր կարողությունների բոլոր կողմերով և 7-8-րդ դասարաններում, երբ հստակ երևում է սովորողների ընդունակությունները, կարելի է կիրառել տարբերակված ուսուցում՝ տարբեր մակարդակներով:

Հաշվի առնելով կրթական կարիքները՝ տարբերակված ուսուցում իրականացնում են նաև կազմակերպչական ռազմավարությունից ելնելով՝ միևնույն ունակությունների տեր աշակերտներին նույն հոսքում ուսուցանելով (Ամիրջանյան Յու. 2005): Այս տարբերակումների իմաստ ընդհանուր ունակությունների գաղափարն է: Այսպես, օրինակ, արտասահմանյան շատ երկրներում կան թեքումով դպրոցներ (օրինակ՝ լեզուների թեքումով դպրոց, որտեղ խորացված ուսումնասիրում են անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, պարսկերեն և այլն), որտեղ հենց նշված առարկաների խորացված ուսուցում է կազմակերպվում: Արտասահմանյան երկրներում տարբերակված ուսուցման հիմքում ընկած է այն պնդումը, որ մարդու ընդունակությունները պայմանավորված են ընդունակության գործոնով, և սովորելու ժամանակ կարևոր է ուսումնառողի մտածողությունը, այլ ոչ թե նրա հիշողությունը և ուշադրությունը: Այս հայեցակարգից ելնելով՝ շատ մանկավարժներ սովորողների մտավոր ունակությունները բացահայտելու համար դիմում են թեստերի օգնությանը:

3.Փորձարարական հետազոտություն

3.1.Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Մադինա գյուղի միջնակարգ դպրոցի 3-րդ դասարանում, քանի որ այս դասարանից է սկսվում անգլերենի ուսուցումը եւ բնականաբար աշակերտների մոտ ձեւավորվում է նոր արժեքային համակարգ: Այս դասարանում սովորում են 6 աշակերտ՝ 3 աղջիկ և 3 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիություն և հմտություններ: Անգլերեն անցնում են շաբաթական 3 ժամ և դասացուցակում այն տեղադրված է 3-րդ կամ 4-րդ ժամերին: 2-րդ կիսամյակում արդեն նկատելի էր յուրաքանչյուր աշակերտի կարողությունն այս առարկայից: Այս դասարանի հիմնական խնդիրն է աշակերտների ներգրավվվածությունը դասապրոցեսի մեջ, ինչը պատճառ դարձավ, որ ես իմ հետազոտական աշխատանքը իրականացնեմ միջին կարողությունների տեր 3 աշակերտների համար կազմակերպել տարբերակված ուսուցում անհատական թեստերի միջոցով, իսկ մնացած աշակերտների հետ կկատարենք տարբեր բնույթի աշխատանքներ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կարողությունները և հմտությունները:

3.2.Փորձարարական դաս-1

Այսօրվա դասը վերաբերում էր <<My day>> թեմային (տե՛ս դասապլան-1 էջ՝ 11): Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով. բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները՝ որոշակի սխալներով: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները , տրվեց բանավոր հետադարձ կապ: Այնուհետև աշակերտներն ինքնուրույն թարգմանեցին նոր բառերը: Նոր բառապաշարին ծանոթանալուց հետո կատարվեց տեքստի ընթերցում: Տարբերակված ուսուցման մեթոդն օգտագործելով հարցերի և առաջադրանքների միջոցով չափորոշչային նվազագույն պահանջները ստուգելու համար աշակերտները հնչեցրին իրենց համար անհասկանալի հարցերը, տրվեց լրացուցիչ բացատրություններ:

Դասն ավարտվեց տնայն աշխատանքի հանձնարարումով. 1 վարժություն ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների համար և մեկ վարժություն միջին և բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների համար:

3.3.Փորձարարական դաս-2 Այսօրվա դասի թեման էր <<**PRACTISE YOUR SOUNDS "Oo"**>>(տե՛ս դասպլան-2 էջ՝ 21): Թեման բավականին մատչելի էր և հեշտ ընկալվող այդ իսկ պատճառով թեման ամբողջովին հաղորդվեց աշակերտների մասնակցությամբ: Նոր դասը սկսվեց տնային աշխատանքի ստուգումով: Աշակերտները կարողացան վերարտադրել անցած թեման, ինչպես նաև մի փոքր պատմել իրենց օրվա մասին:

Դասի ընթացքում բացատրվեց բոլոր սխալները, տրվեց լրացուցիչ բացատրություն ինչպես իմ, այնպես էլ մի քանի բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների կողմից: Աշակերտները նշեցին, որ այս ոճի դասի անցկացումը իրենց դուր եկավ, քանի որ այսպիսի դասերը ավելի արդյունավետ են, քանի որ ստանում են ինչպես նոր գիտելիք, այնպես էլ ամբողջ դասարանն է մասնակցում դասապրոցեսին՝ ապահովելով ամբողջ դասարանի ներգրավվածությունը:

Անցած դասը քննարկելուց հետո հաղորդվեց նոր դասը, որը վերաբերվում է << **PRACTISE YOUR SOUNDS "Oo"** >> - ին: Թեման ամրապնդելու, ինչպես նաև ամփոփելու նպատակով դարձյալ 3 միջին առաջադիմություն ունեցող աշակերտների բաժանվեց 2 տարբերակով տարբերակված թեստեր(տես դասապլան-2, էջ՝ 14), բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների հետ գրվեց 2 բարդ վարժություններ, իսկ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների համար գրատախտակին գրվեց տարբեր բառեր, որոնք բառարանի միջոցով թարգմանեցին, կատարեցին նշումներ տետրերում և արտասանեցին: Թեման ամփոփելու համար յուրաքանչյուր աշակերտ կազմեց 1 նախադասություն իր իսկ կողմից ընտրված բառով՝ իր կարողությանը համապատասխան, այնուհետև հանձնարարվեց տնային աշխատանք:

4. Վերլուծություն

Աշակերտների ներգրավվածությունը ապահովելու համար՝ անցկացվեց 2 տարբերակված դասեր, որի ժամանակ գրավոր հետադարձ կապ: Իմ ուշադրության կենտրոնում եմ պահել հիմնականում միջին նցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին, որն էլ պատճառ հանդիսացավ նրանց ներգրավվածությանը դասապրոցեսին, ինչպես նաև նրանց հնարավորություն տրվեց ձեռք բերել ինքնուրույն աշխատելու հմտություն: Աշակերտները խոստովանեցին, որ բանավոր տրամադրված հետադարձ կապը ավելի արդյունավետ է:Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, եկա այն եզրակացության, որ ներգրավվածության բարձրացումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1.տարաբնույթ տարբերակված վարժությունների կատարում տարբեր առաջադիմություն ունեցող աշակերտների համար

2.հարցադրումներ և տարբերակված ուսուցում մեթոդների կիրառում դասաժամերին

3.գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում

4.տարբերակվածթեստային առաջադրանքների լուծում և քննարկում

5.թեմայի հիշեցում, ամրապնդում և ամփոփում՝ անհատական գրավոր աշխատանքների միջոցով

5.Գրականության ցանկ

1.Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս. ,,Մանկավարժություն,, Մանկավարժ 2005

2.Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր՝ <<Անգլերեն լեզու>> 2007

3.Зинудин Абасович Абасов ,, Дифференциация обучения : сущность и формы,, Журнал директор школи 2004

4.Зарецкий В. К. ,,Проблемы дифференцированнога обучения и возможности интегразии,, ИПИ, Москва

5.Климова Н. В. Учитель информатики и ИКТ МОУ <<Шверцвбская СОШ>> ,,Дифференцированный подход в обучении информатике,, 2009

6.Հավելված

Դասապլան-1

Ուսուցիչ՝ Անժելա Հայրապետյան

Առարկա՝	անգլերեն	Ամսաթիվ	Կիսամյակ	I Դասարան	3-րդ
Թեմա՝	My day				
Օգտագործվող նյութեր՝	*Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, բառարան*				
Դասի նպատակը՝	Սովորել նոր բառեր Կարդալ ,հասկանալ թեման Կատարել վարժություններ				
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ				
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան. Սովորել մի շարք բառեր, որոնք կօգտագործվեն նախադասությունների մեջ Պատմել իրենց օրվա մասին				
Գործողություններ(ժամ\տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվողմեթոդ (ներ)	
5րոպե-սկիզբ 10րոպե-ընթացք	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները Պատասխանել հարցերին Փոխադարձ հարցեր տալ, փակ	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցադրումներ	1.Կարողեք պատմել ձեր օրվա մասին	*Հարցադրումների մեթոդ*	

15рոպե 12рոպե 3рոպե-ավարտ	հարցերին պատասխանում են ,,ցածր,, առաջադիմություն ունեցող աշակերտները՝ ստեղծելով ,,հավելյար,, արժեքներ 4 աշակերտ կատարում են առաջադրանքները գրատախտակին, մյուսները կատարում են նշումներ տետրերում անկանոն բայ, կթարգմանեն և կարտասանեն *Լուռ լսել դասը , կատարել նշումներ, հնչեցնել անհասկանալի հարցեր, աշխատանք դասագրքի հետ*	Գրատախտակը բաժանել 4 մասի, գրել տարբեր նախադասություններ,առաջարկելով ընդգծել բայերը Հետևել կատարվող աշխատանքներին, կատարել շտկումներ Հետևել կատարվող աշխատանքներին, տրամադրել անհրաժեշտության դեպքում առաջ մղող անհատական բանավոր, գրավոր հետադարձ կապ: Նոր թեմայի հաղորդում, բանավոր հետադարձ կապի տրամադրում, անհասկանալի հատվածների բացատրություն Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում		*Տարբերակված ուսուցում* *Կարճ դասախոսություն՝ ստեղծելով միջառարկայական կապ(հայոց լեզու)*
Տնային աշխատանք	Էջ.139 վ.9			

TEST 1

- 1.**Fill in the missing letters.**

1. _he
2. _helf
3. _hip
4. _herry

- **2.Choose the right word**

1. We do/don't play.
2. You do/don't wash.
3. Do/does she go to bed.
4. Do/does Tom get up.

TEST 2

- 1. **Make up sentences**

1. goes, Jim, to, school
2. he, school, likes, his
3. friends, he, many, has
4. is, housewife, she

2. Look at the text and fill in, to, at, after.

1. I get up _____ 8o`clock.

2._____ school I come home.

3.____ 10o`clock I go ____ bed.

4. ____ the street I see my friend.

Դասապլան-2

Ուսուցիչ՝ Անժելա Հայրապետյան

Առարկա՝	Անգլերեն	Ամսաթիվ	Կիսամյակ	I	Դասարան	3-րդ
Թեմա՝	Practise your sounds Oo					
Օգտագործվող նյութեր՝	*Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, , բառարան*					
Դասի նպատակը՝	Իմանալ-Oo տառի արտասանական 2 տարբերակները Իմանալ-բառերի ճիշտ գրելու ձևը և արտասանությունը					
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ					
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան. Կարդալ բառեր Կատարել վարժություններ Հստակ արտասանել բառերը					
Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվողմեթոդ (ներ)		
5րոպե-սկիզբ 10րոպե-ընթացք 10 բոպե	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին:Ներկայացնել տնային աշխատանքները Բոլոր աշակերտների մասնակցությամբ քննարկվեց տնայյին աշխատանքը,գրատախտակին, հնչեցվեցին հետաքրքրող հարցերը, ստեղծվեց ,,հավելյար,, գիտելիք Պատասխանել հարցերին, տալ փոխադարձ հարցեր, հնչեցնել կարծիքներ, կատարել նշումներ տետրերում	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը հետադարձ կապի տրամադրում Նոր թեմայի հաղորդում աշակերտների մասնակցությամբ	1.Ասեք Oo տառի արտասանական տարբերակները .2Ինչպե՞ս անգլերենով կարտասանեք Oo տառով գրված բառերը	*Հարցադրումներ*		

15րոպե 1րոպե 4րոպե-ավարտ	Տարբերակված ուսուցում A B C D E F աշակերտների նկատմամբ Բարձր առաջադիմության տեր աշակերտները կատարում են աշխատանք գրատախտակից և դասագրքից, իսկ ցածր առաջադիմության տեր աշակերտները թարգմանեցին բառարանի միջոցով, կատարեցին նշումներ և արտասանեցին բառերը Յուրաքանչյուր աշակերտ կազմեց 1 նախադասություն իր իսկ կողմից ընտրված բառով՝ իր կարողությանը համապատասխան	Թեման ամրապնդելու, ամփոփելու, ինչպես նաև ամբողջ դասարանի ներգրավվածությունը ապահովելու համար կատարվեցին 2 բարդ վարժություն, որից մեկը գրվեց գրատախտակին ուսուցչի կողմից, իսկ մյուսը առաջադրվեց դասագրքից, իսկ ցածր կարողության տեր աշակերտների համար գրատախտակին գրվեց մի քանի բառեր Տրամադրվեց առաջ մղող բանավոր հետադարձ կապ և ուղղորդումներ Թեման ամփոփվեց 1 կարճ նախադասությամբ տնային աշխատանքի հանձնարարում	Էջ.150 վ.2	

TEST 1

1. **Fill in the missing letters**
   St_ne, ora_ge, to_e, no_e, p_le

2. **Put the words in the right column: dog, home, frog, ox, nose, rose, stone, box.**

O	OU

TEST2

1. **Choose the right word.**

1. He live/lives in London
2. Jim is/are ten.
3. He go/goes to work
4. I clean/cleans the house

2. **Fill in the missing letters.**
   St_ne, ora_ge, to_e, no_e, p_le